ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12.10.2022

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2022 թվականի հոկտեմբերի 11-ի արտահերթ ընդհանուր ժողովը թիվ 2022-3-1 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվեկշռային հաշվից (կուտակված շահույթ) բաշխել շահութաբաժիններ 16.000.000.000 (տասնվեց միլիարդ) ՀՀ դրամի չափով:
2. Շահութաբաժիններն ամբողջությամբ բաշխել «Արդշինբանկ» ՓԲԸ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերերին՝ ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցության համամասնությունների՝ պայմանով, որ դա չի հանգեցնի «Արդշինբանկ» ՓԲԸ կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:
3. Շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու կարգով: Վճարումն իրականացնել օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման բացակայության հանգամանքը «Արդշինբանկ» ՓԲԸ ֆինանսական տնօրենի կողմից հաստատելուց հետո:
4. Սույն որոշման 1-ին կետով սահմանված շահութաբաժինները վճարել Բանկի այն հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերի ռեեստրներում՝ 2022 թվականի հոկտեմբերի 11-ին կայանալիք արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ: